ԴՐԱՄԱԳԼԽԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » _____ 2025 թվականի

N - Ն

ԴՐԱՄԱԳԼԽԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ Հայաստանի
Հանրապետության կառավարությունը որոշում է.
1. Հաստատել դրամագլխին հատկացումներ կատարելու կարգը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է 2026 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
_____ ___-ի N ___-Ն որոշման

ԴՐԱՄԱԳԼԽԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է դրամագլխին հատկացումներ կատարելու ընթացակարգը:
2. Կարգում օգտագործվող հասկացություններն ունեն «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքով (այսուհետ՝
Օրենք) սահմանված նշանակությունները:

2. ԴՐԱՄԱԳԼԽԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

3. Դրամագլխին միջոցների հատկացումը կարող է իրականացվել պետական բյուջեից և օրենքով չարգելված
այլ աղբյուրներից:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Ազգային մարմինը յուրաքանչյուր տարվա մինչև առաջին ամսվա 15-ը

Լիազորված պետական մարմնին է
ներկայացնում նախորդ տարվա ընթացքում կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորման համար պետական
բյուջեով նախատեսված և նախորդ տարում չօգտագործված միջոցների մասին հաշվետվություն՝ նշելով դրանց
չօգտագործման հիմնավորումները:
5. Լիազորված պետական մարմինը, սույն որոշման 4-րդ կետով սահմանված կարգով Ազգային մարմնի
կողմից ներկայացված հաշվետվությունը հիմք ընդունելով, շրջանառում է «ՀՀ պետական բյուջեում վերաբաշխում
և լրացում կատարելու և պահուստային ֆոնդից գումար հատկացնելու վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման
նախագիծ՝ նախորդ տարի պետական բյուջեով կինեմատոգրաֆիայի ոլորտի ֆինանսավորման համար
նախատեսված, նախորդ տարում չօգտագործված և մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը պետական բյուջե
վերադարձված միջոցների չափով:

6. Կարգի 5–րդ կետով հաստատված Կառավարության որոշմամբ ֆինանսական միջոցները փոխանցվում են
դրամագլխին մինչև ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ավարտը:
7. Կառավարության որոշմամբ պետական բյուջեից դրամագլխին կարող են հատկացվել նաև այլ
ֆինանսական միջոցներ «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքով սահմանված գործառույթները իրականացնելու
համար:
4. ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՄԻ ՀԵՌԱՐԶԱԿՄԱՆ ԵՎ ԿԻՆՈԹԱՏՐՈՆՈՒՄ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ
ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Ազգային մարմինը իրավասու է Միասնական տեղեկատվական համակարգի միջոցով ազգային ֆիլմի
հեռարձակման և կինոթատրոնում ցուցադրման, ինչպես նաև դրանց ընթացքում գովազդի տեղադրմամբ ստացված
եկամուտների մասին տեղեկատվության առնչությամբ իրականացնել մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում
համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ:
9. «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն Ազգային մարմնի
կողմից ստացված եկամուտները կուտակվում և դեպոնենտացվում են մինչև տվյալ տարվա դեկտեմբեր ամիսը
ներառյալ:

5. ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. Դրամագլխին կարող են անհատույց ֆինանսական միջոցներ փոխանցվել

նաև Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից /այսուհետ՝ այլ աղբյուր/:
11. Բոլոր աղբյուրներից անհատույց ֆինանսական միջոցները բաշխելու համար Ազգային մարմինը
Լիազորված պետական մարմնին համաձայնեցման է ներկայացնում Ազգային մարմնի Հոգաբարձուների խորհրդի
կողմից հաստատված ծրագիրը՝ նշելով գումարի ծախսման նպատակային ուղղությունները:
12. Լիազորված պետական մարմինը, մեկամսյա ժամկետում ուսումնասիրում է Կարգի 11–րդ կետով
սահմանված ծրագիրը և այն կինեմատոգրաֆիայի ոլորտի քաղաքականությանը համահունչ լինելու դեպքում տալիս
է համաձայնություն:
13. Կարգի 11–րդ կետով սահմանված ծրագրի շուրջ Լիազորված պետական մարմնի հետ
տարաձայնությունների առկայության դեպքում, այն վերադարձվում է Ազգային մարմնին և տրամադրվում է

երկշաբաթյա ժամկետ Լիազորված պետական մարմնի ներկայացրած դիտարկումներին համապատասխանեցնելու և
կրկին համաձայնեցման ներկայացնելու համար:
14. Դրամագլխին այլ աղբյուրներից հատկացված ֆինանսական միջոցները կարող են բաշխվել միայն Կարգի
12–րդ կետով սահմանված ձևաչափով և ընթացակարգով: